

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	262
Տէր Ներսէսեան Հ. Ներսէս. — Սամուէլ Մուրատի յիշատակին (ծննդեան Բ. դարադարձին առիթով. 1760-1960)	261
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
Յովհաննէսեան Հ. ՎԱՀԱՆ. — Միտիթար Գուշի Ս. Ղազարու թիւ 1237 ձեռագիրը և 225րդ կանոնը	266
ԾԻՍԱԿԱՆ	
Յովհաննէսեան Հ. ՂՈՒԿԱՍ. — Ս. Պատարագի ծէսը ԺԳ. դարուն Յովհաննէս Արճիշեցիի քով	273
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմութիւն Հայ Ազգային Կրթական Կենտրոնի (Շար.)	288
ՊԱՏՄԱԿԱՆ	
Յովհաննէսեան Հ. ՄԻՔԱՅԷԼ. — Հայաստանի բերդերը (Շար.)	292
ԳՐԱԿԱՆ	
Յովհաննէսեան Հ. ՎԱՀԱՆ. — Եղիշէ Դուրեան իր բանաստեղծութիւններուն մէջ (ծննդեան հարիւրամեակին առիթով)	297
— — — Հայրենի ներշնչումներ	
— — — Հայաստան	305
— — — Յ. Թումանյանի շիրմին առջև	306
— — — Երևանի պարտէզները	307
— — — Գայանէ	308
ԳԵՂԱՐՈՒԵՍ	
Հէրմիտեան Օթոն Յ. — Դասիթ Դասիթեան (Անձնական յուշերէս)	301
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
Քրիստեան Յ. — «Հայ գրի եւ գրչութեան պատմութիւն», Ա. Գ. Արքայեան	309
— — — «Էջեր հայ միջնադարեան արձակից»	315
— — — «Շապին Գարսիսար եւ իր հերոսամարտը», Արամ Հայկազի	316
— — — «Ամենայն Հայոց Հայրիկ»	316

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

Խաղիկի համար	3000 Լիր
Արտասահմանի համար	6 Դոլար
Մէկ թիւը 250 Լիր —	0,50 Դոլար

SOMMAIRE

ARTICLE DE FOND	PAGE
DER NERSESSIAN P. NERSES. — En l'honneur de Samuel Moorat (à l'occasion du IIe centenaire de sa naissance: 1760-1960)	261
PHILOLOGIE	
HOVHANNESSIAN P. VAHAN. — Le manuscrit n. 1237 de St. Lazare de Mekithar Goche et le canon n. 225	266
LITURGIE	
FOGOLYAN P. LUC. — La liturgie de la S.te Messe au XIII ^e siècle chez Jean d'Ar-djèche	273
HATSOUNI P. VARDAN. — Histoire du Bréviaire Arménien (Suite)	288
HISTOIRE	
HOVHANNESSIAN P. MICHEL. — Les for-teresses de l'Arménie (Suite)	292
LITTERATURE	
HOVHANNESSIAN P. VAHAN. — Elisée Dourian dans ses poésies (à l'occasion du centenaire de sa naissance)	297
— — — Arménie	305
— — — Devant le tombeau de H. Thou-manian	306
— — — Les jardins d'Erivan	307
— — — Gayané	308
BEAUX ARTS	
HEKIMIAN OTHON. — Le violoniste David Davidian (mémoires personnelles)	301
RECENSIONS	
KURDIAN H. — «Paléographie arménienne» de A. G. Abrahamian	309
— — — «Pages de prose arménienne du moyen-âge»	315
— — — «Chabine Karahissar et sa résis-tance heroïque» d'Aram Haygaz	316
— — — «Les lettres de Khrimian Hayrig»	316

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

Pour l'Italie.	3000 Lires
Pour l'Etranger	6 Dollars
Le Numéro: 250 Lires — 0,50 Dollars	

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia



1843 - 1960
ՃԺԸ. ՏԱՐԻ

ԹԻՒ 11 - 12

ՆՈՅՆԱՐԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԵՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXVIII^e année, 1960, N. 11 - 12 Novembre - Décembre

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԾՆՆԴԵԱՆ Բ. ԴԱՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

1760 - 1960

«Եթէ Տէրը յաջողութիւն տայ իմ գործիս, նախաժողովուրդը եւս իմ ազգիս, եւ այն այնչափ՝ որքան ո՛չ ոք կատարած է մինչեւ օրս» աշակերտը իմ համարած է 1790ին, Հնդկաստան հաստատուած Եղիշէի հարուստ վաճառական մը, Միկրտիչ Սամուէլ Մուրատեան, թո- ուր Զուղայեցի իշխաններէն «Միլիք» Մուրատ Աղամալեանի: Նուիրական խոս- տում մը, համեստօրէն եւ անկեղծաբար ներկայացուած, անձնական նամակի մը մէկ անկիւնը, բայց որ կը ցոլացնէ հայ- ազգի վաճառականին ազգանունէն նախ- ապա, լոյսի եւ գիտութեան սիրահար սրտի մը ազնուական զգացումներով բա- րակուս:

Սամուէլ Մուրատ ճշմարիտ հայրենա- սիրութեան տիպարն էր. խորապէս հա- մոզուած էր՝ թէ հայ ազգի փրկութիւնն ու զօրութիւնը կախում ունէր իր լուսա-ւորութեան եւ մտաւորական յառաջգի- մութեան աստիճանէն. կը զգար թէ հայը հայ պահելու անհրաժեշտ ու կենսական

պայմանն էր՝ նախ իր բնիկ լեզուին ու- սուցումը, առանց որովհետեւ հայրենիքէն բաժնուած ու պանդուխտ հայորդիները, ուշ կամ կանուխ, պիտի ձուլուէին օտար ազգերու մէջ. եւ մայրենի լեզուին առըն- թեք լուսամբիտ վաճառականը անհրա- ժեշտ կը նկատէր նաեւ տոհմային բար- քերու եւ մեր հնաւանդ ու փառապանծ պատմութեան հմտութիւնը:

Բայց Սամուէլ Մուրատի մէջ այս զգացումները սին փափաքներ չէին մի- այն. պոռոտախօս ու պերճաբան դերա- սանը չէր Մուրատ, որ հայրենասիրու- թեան քարոզներ որոտար արեւելքէն ա- րեւմուտք, իր նամակներով. դրական ու գործի մարդն էր անիկա. տեսաւ անհրա- ժեշտութիւնը լուսաւորութեան, ըմբռնեց կարեւորութիւնը դպրոցին ու մանկա- կան դաստիարակութեան, որ առաջին ու նուիրական քայլն է համազգային վերա- նորոգութեան, ու . . . դրաւ իր դրամը: Այսպէս Սամուէլ Մուրատ գիտցաւ նիւ- թը փոխել լոյսի:



1609-71
645-734

Եւ այս եղաւ Սամուէլ Մուրատի իմաստութիւնը. այս եղաւ նաեւ անոր անմահութիւնը:

Իր կտակին մէջ իսկ — զոր ինք, լուսամիտ յառաջատեսութեամբ մը, առաջինը նկատեց՝ նման օգտաշատ կտակներու շարքի մը — կ'ըսէ. «Կը յուսամ որ Աստուծոյ ուրիշ հարուստ հայեր ալ, դպրոցական ուսման քաղցրութիւնը ճաշակելէ վերջ, ինչ որ իմ միջոցովս կը սկսի, իմ օրինակիս հետեւին, եւ ատով կարելի ըլլայ մեր ազգին մէջ սփռել, եթէ ոչ լիով, գոնէ մասամբ, գիտութեան եւ իմաստութեան լոյսը. եւ մեր անտէրունչ ազգը արթննայ իր խոր թմբիւրէն»:

Ահա թէ ինչպէս դրամի մարդը, արծաթի առեւտրականը, դարձաւ լոյսի վաճառական, մշակոյթի ռազմիրայ, ազգային գիտութեանց մեկենաս. ըլլալով միաժամանակ խորապէս գիտակից իր կատարած փրկարար գերին, որ իր ետեւէն պիտի առնէին նման վեհանքն ու առատաձեռն հոգիներու լուսաշող երամ մը:

Սամուէլ Մուրատի այս կտակը եւ օրինակը վեր է արդարեւ ազգասիրական ամէն քարոզէ, հայ մշակոյթի եւ ազգապահպանման դատին նուիրուած ամէն ձեռնարկէ:



Բայց ուրիշ յանկարծ Սամուէլ Մուրատի այս կտակը. ինչպէս հեռուոր աշխարհի մը անկիւնը գտնուող առեւտրականը կ'ունենայ այս վեհ դադափարը՝ վերածնելու իր ազգը բարձրագոյն մշակոյթով:

Եթէ արմատն ուզենք քննել Սամուէլ Մուրատի ազնուական այս դպրոցումներուն, պէտք ենք բարձրանալ մինչեւ 1770ական թուականները:

Սամուէլ Մուրատի հայրը, Աղա Սարում Մկրտիչ Մուրատեանց, առեւտրական գործերով առեն մը գտնուած է Պոլիս. անկէ, պարագաներու բերումով, 1773ի առեւտները, կ'անցնի Հոնդարիոյ

Պետրովարատին քաղաքը, ուր Մխիթարեան Միաբանութիւնը Մխիթար Արքայօր կենդանութեան շրջանին իսկ բացած էր ազգային վարժարան մը. կը կարծենք առաջինը՝ եւրոպական ըմբռնումով դըստըրոցի, եւ այդ գործին մէջ կը նկատենք մեծ Սերաստացիին լուսանորոգի փրկարար գերը նաեւ հայ դպրոցի հիմնարկութեան մէջ, Մխիթար Դաստիարակի պատկերին տակ: Ահա այդ վարժարանին մէջ փոքրիկն Սամուէլ կ'առնէ իր ազգային առաջին ուսումը, դաստիարակ ունենալով հայրենաշունչ Հ. Կարապետ Մարտիրոսեան Մխիթարեան Վարդապետը. շուտով կը սորվի Մեսրոպեան բարբառը, կը ջերմանայ Հայկի եւ Արայի, Արամի եւ Տիգրանի քաջագործութիւնները լսելով. եւ այդ օրէն փոքրիկն Սամուէլի սրտին մէջ կը բորբոքի ապագայ մեծ բարերարին ազգասէր ոգին:

1775ին, Մուրատեան հայր ու որդի կը հասնին Վենետիկ, ու կը մնան Ս. Ղազարու վանքը, մտերմանալով Մխիթարեան բոլոր Վարդապետներուն հետ: Վանքի սրբակրօն միջնորդը, ուսումնասէն միաբաններու ժիր աշխատանքը, վանական կարգն ու կանոնը խոր տպաւորութիւն կը թողուն պատանի Սամուէլին վրայ: Այս ա'յն շրջանն է՝ երբ Ասկէրեան վարպետօրէն կը յղկէր մեր պաշտելի դրարարը, Չամչեան խանդավառօրէն կը հիւսէր Հայոց պատմութիւնը, երիտասարդ Աւետիքեան արդէն իսկ կ'աւսուածարանէր. վանքին մէջ կը փայլէր նաեւ Մուրատեաններու մէկ ազգականը՝ Հ. Սուքիաս Աղամալեան:

Այսպիսի միջավայրի մէջ չորս ամիս մնաց Սամուէլ Մուրատ. եւ այնուհետեւ իր սիրտը բաբախեց իսկական հայու մը արդար հպարտութեամբ, ազգային վերանորոգութեան սքանչելի դադափարականով:

Ահա առաջին դերը, զոր Մխիթարեան Հայրերն ունեցած են Սամուէլ Մուրատի ազգօգուտ գործին մէջ. անոնք իրենց լուսն ու մեղուաջան գործունէութեամբ բոցա-

վառած են Մուրատի ոգին հայրենասիրութեան կայծերով:

Ապագայի մեծ Սամուէլ Մուրատը ուրիշ բան չըրաւ, բայց եթէ թեւ ու թիկունք ըլլալ Ս. Ղազարի միաբաններուն, դիւրացնել եւ ընդարձակել անոնց աշխատանքը, ծաւալել այնտեղ ամբարուած գիտութիւնը, միջոցներ հայթայթել ամէն կողմ հասցնելու տոհմային գիտութեանց լոյսը:

Մարդարէական ոգիով մը արդեօք Ս. Ղազարի Հայրերը կարողացէ՞ր էին պատանի Մուրատի աչքերուն մէջ այդ բոլորը:



Բայց Մխիթարեանները Մուրատեան կտակի գործադրութեան մէջ եւս ունէին կարեւոր դեր մը. դեր մը նախախնամական, զոր կատարեցին ի դին մեծամեծ գոհողութիւններու, առանց անձնական ամենադոյզն շահի, եւ մի միայն ի սպաս հայ դպրոցին եւ ազգային լուսաւորութեան:

Սամուէլ Մուրատ իր հասուն հասակին, աջողակ առեւտրական մը, հաստատուած էր Մատրասի մէջ, ամուսնացած հնգկահայ ուրիշ մէկ բարերարի մը՝ Եղեարդ Ռափայէլ Ղարամեանի աջկան հետ, եւ դարձած զաւակներու տէր:

Դժբախտաբար այս երկու բարերարներուն ալ զաւակները, դրամին հետ չեն ժառանգել իրենց հայրերուն ազգասիրութիւնը. մանաւանդ թէ, արդէն իսկ կը հանդիսանան հօրենական կտակներուն անմիջական իրադարձումին, խոստումնալից յուսադրութիւններով կը ձգձգեն եւ հետզհետէ աւելի կը դժուարացնեն անոնց յանձնումը: Սակայն Վենետիկի անխոնջ միաբանները չեն յուսահատիր. երեք անգամ ամբողջ Ափրիկէի շրջանը կ'ընեն, Լոնտրայէն մինչեւ Մատրաս, յաճախ փոթորիկէն հալածուած ու նաւարկ: Իրօք, 1790ին, Հ. Պօղոս Մէհէրեան, Բարեյոսոյ հրուանդանի մուսթին, տեսնելով իր նաւին խորտակումը, ծով կը նետուի, եւ

իրրեւ անվահեր Մշեցի ու քաջ լուղորդ, կը յաղթէ ալիքներու կատաղութեան, կը յաջողի ցամաք ելլել ու անցնի Հոլանտա: Անդին, Հ. Սարգիս Թէոդորեան ամիսներով կը տուայտի Մատրասի բանտին մէջ: Հ. Նիկողայոս Բուզայեան երկար կը տառապի պանդխտութեան մէջ եւ անմխիթար կը փակէ իր աչքերը՝ հեռու իր պաշտելի վանքէն:

Ամբողջ 16 տարի կը տեւէ ժառանգական խնդիրը (1816-1832), մինչեւ որ Ս. Ղազարու Հայրերը պաշտօնապէս կը տիրանան Մուրատեան կտակին՝ պաշտօնական յանձնաթուղթերով, երկար դատ դատաստանէ վերջ:

Իսկ իրադրո՞ւմը:

Սրբազան աւանդը հազիւ ապահոված՝ Մխիթարեան Միաբանութիւնը անով երկրագործական կալուածներ կը գնէ, նըպաստաւոր պայմաններով, լաւագոյն հասոյթներով արդիւնաւորելու համար դրամադրուի:

Եւ երկու տարի չանցած, 1834ի Օգոստոս 15ին, Փատովայի մէջ — նշանաւոր իր պատմական համալսարանով — վարձու շէնք մը կը հիւրընկալէր Մուրատեան վարժարանի անդրանիկ աշակերտները, եւ նոյն օրն իսկ կը կատարուէր պաշտօնական բացումը:

Հանդէսի պահուն, խանդավառօրէն կ'ողբէր յուր յիշատակը անմահանուն Սամուէլ Մուրատի, հետեւեալ բառերով. «Աշխարհականներու անունէն մեծ է քու խոնարհ անունդ, ո'վ բարեացապարտ եւ ազգասէր Սամուէլ, զուն մեծամեծ խորհուրդներ յղացար. մահը նախանձեցաւ ու չթողուց որ ողջութեանդ վայելէիր. բայց ահա լրիւ գործադրուեցաւ քու սրբալիդ փափաքը, որ դերեզմանէն իսկ չէ դադրած: Հանդէ՛հ! հիմա խաղաղ, ահա՛ հասան քեզի որդեակալ աշակերտներ, որոնք աւելի պիտի հարստացնեն քու տունդ՝ քան այն դիւրացնողի դանձերը, զոր թողուցիր. տարուէ տարի, սերունդէ սերունդ, ասոնք պիտի անմահացնեն քու անունդ»:

Այո՛, յաղթանակի տօնն էր տոնիկա:

Բայց փոթորիկը կը սպառնար տակաւին. եւ հարկ էր դարձեալ աննկուն կորովով պայքարիլ ապահովելու համար Մուրատեան Վարժարանի գոյութիւնը, ընդդէմ արտաքին ու ներքին հակառակորդներու, ընդդէմ Աւստրիական բռնակալութեան եւ Մուրատեան ժառանգներու նախանձին:

Ս. Ղազարի Հայրերու խորագէտ ու ձեռնեղէց հնարամտութեան շնորհիւ, 1846ին, այն է 12 տարի վերջ, Մուրատեան Վարժարանը ձողապրած Մեթերնի-խի բռնապետական ճիրաններէն, յանկարծ իր դռները կը բանար փարիզի՝ լոյսի ոստանին մէջ, Լուի-Ֆիլիպի արքայի հօր պաշտպանութեան ներքեւ:

Ամբողջ 24 տարի լոյսի վառարան մը կը դառնայ Մուրատեանը փարիզի. եւ մի միայն փրանկ-բրոնսական պատերազմի թնգանօթներն են որ կը սպառնան իրեն. բայց ան չի մարիր. Մուրատի կրակը անչէջ էր, այնքան զոհողութիւններու սրբազան իւզով արծարծուն. 1870ին Մուրատեան Վարժարանը կը փոխադրուի Վենետիկ, ու կը միանայ 1836էն ի վեր անկախաբար գոյութիւն ունեցող «Ռափայէլեան» Վարժարանին հետ (Եղուարդ Ռափայէլ Ղաւթեանցի կտակով բացուած) եւ այնուհետեւ միաձոյլ ու մէկ անունով կը կոչուին «Մուրատ-Ռափայէլեան Վարժարան» որ յետոյ վայելեց Սաւոյիոյ արքայական տան պաշտպանութիւնն ու առանձնաշնորհումները:

1929ին, Միխայիլեան Միքայէլեանը գեղեցիկ գաղափարը կ'ունենայ Մուրատեան Վարժարանը դարձեալ փարիզ հաստատելու: 1914ի եւ նախորդ ջարդերու եւ տեղահանութեանց հետեւանքով՝ հայկական հոծ գաղութ մը հաստատուած էր հիւրընկալ Ֆրանսայի մէջ. Ֆրանսական մշակոյթը անփոխարինելի հրապոյր մը ունէր մասնատրարար Հայոց համար. եւ ահա Մուրատեան Վրժ.ը կու գար գլխուն իր չորրորդ հանգրուանը, դարձեալ փարիզ. այս անգամ կրկնակի փրկարար

դերով մը նուիրական. ջարդուած ու տասանորդուած ժողովուրդի մը բեկորները փրկել օտարացումէ՝ որ շատ աւելի կը սպառնար այս անգամ:

Ու հիմա ամբողջ երեսնամեակ մը բաղմած Մէնի ափերուն, Մուրատեան Վարժարանը դարձած է փեթակ մը ժիր դործունէութեան, ստեղծելով իր շուրջ միշտ յարաճուն խանդավառութիւն եւ ազդային ոգի:



Պատմական հակիրճ այս անդրադարձութիւնները, Սամուէլ Մուրատի ծննդեան երկհարիւրամեակին առիթով, կը դնեն մեր առջեւ վսեմ պատկերը անմահ բարերարին. կը վերարծարծեն նաեւ անխոնջ ջանքերը բարերարին կտակը արդիւնաւորող ազդասէր վարդապետներուն. առանց բարերարին՝ երկրորդները պիտի չկարենային իրադրծել իրենց երազը. առանց երկրորդներուն՝ ամուլ պիտի մընար ու թերեւս ի սպառ կորսուէր Մուրատեան կտակը:

Մեր երախտագիտութեան զգացումը կրկնակի է, ուրեմն. բարերարին հետ, նաեւ այն հոյլ մը Հայրերուն, որոնք՝ Մուրատեան Վարժարանի հիմնարկութեան առաջին օրէն իսկ՝ առանց նիւթական ամենադոյզն վարձատրութեան, վեհանքներն ու ճրիարար իրենց բոլոր ոյժերը նուիրեցին հայ մանուկներու բարոյական ու ազգային դաստիարակութեան:

Արդար է որ ամէն տարի բարերարներուն յիշատակին նուիրուած հանդէսով փառաբանուի այդ խոնարհ աշխատանքն ալ, եւ հարիւրաւոր անմեղ սրտեր Մուրատի անդրին շուրջ հաւաքուած, իրրեւակութի մը նուիրական, բերեն իրենց երախտագիտութեան դափնեպսակը՝ Մէնի եւ Ադրիականի ափերէն մինչ Հայաստան արձագանգելով ու ներդրելով անոնց չքնաղ գործին յիշատակը, մաղթելով որ իրրեւ ջահ մը անսասան՝ պայծառափայլ շողջողայ այդ Հաստատութիւնը, ինչպէս Մասիսի գազաթներն անդուգական:

Աշխարհի ամէն կողմը ցրուած սաներու ականջին ու սրտին մէջ թող հնչեն յաւերժօրէն Վարժարանի քայլերդին նուիրական տողերը:

Մենք ենք ծաղիկ ձեր երազին,
Անմահ Մուրատ, Ռափայէլ.
Դուք զիտութեանց ու արուեստից
Լոյսի տաճար կերտեցիք մեզ,
Հայ մանկութեան նոր կեանք տուիք,
Բացիք փառքի վեհ ասպարէզ:

Ու Սամուէլ Մուրատ թող ապրի, վերապրի, վերածնի հազարաւոր սաներու հողիններուն մէջ, ինչպէս արուեսակը դիւթական:



Իսկ արեւահամ պտուղները Մուրատեան մրգաստանին, արեւահամ պտուղները այս չքնաղ ալիքստանին ո՞վ պիտի կարենայ թուել. բայց անոնք ոսկեհատիկ նուռերու նման բոսորափայլ կախուած են մշտադալար ճիւղերէն հաստաբուն ծառին. ուր անջնջելիօրէն փորագրուած են անունները ազգային անմահ դէմքերու, զորս կրնանք հոգեղաւակները նկատել Սամուէլ Մուրատի, անոր փառապսակը կաղմող աստղերու հոյլ մը լուսաշող, որոնք հայ գրականութեան եւ ազգային պատմութեան երկնակամարին զարդերն են, բոցավառ արշալոյս մը աւետող. հրապարակագիր Մատթէոս Մամուրեան, բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշեան, քաղաքագէտ Յովհաննէս Սազըզ Փաշա, Մելգոն Խան, Եաղուպ Արթին Փաշա, Միքայէլ Փորթուզալ Փաշա, ծերակուտական Գրիգոր Պըլզլեան եւ Արամ Երամ... որոնք հայ անունը պանծացուցին թեհրանէն մինչեւ Պոլիս, Դանուբի ափերէն մինչեւ Նեղոսի հովիտը՝ արքայալա-

յել զործունէութեամբ: Այսքանը՝ թուելու համար լոկ Մուրատեանի աշակերտները. որոնցմէ Մկրտիչ Պէշիկթաշեան՝ փատովայի շրջանէն:

Այսպէս, ուրեմն, Սամուէլ Մուրատի մահէն երեսուն տարի վերջ, Մուրատեան Վարժարանի հիմնարկէքին վրայ հաղիւ տասնեւկէս դարուններ անցած, արդէն բռնկած է արշալոյսը Մկրտիչ Պէշիկթաշեանով, որ համեղաբարութեան, ազգային ոգեւորութեան դրօշակիրը եղաւ Վոսփորի ափերուն վրայ, եւ մեր արդի գրականութեան կարապետը:

Ազգովին, ուրեմն, երախտագիտութեամբ պէտք ենք խոնարհիլ Սամուէլ Մուրատի յիշատակին առջեւ եւ խնկաւտել անոր անունը, մանաւանդ երբ նրկատենք որ ինք պատճառ եղաւ նաեւ Ռափայէլեան կտակի իրագործումին ալ, որ նմանապէս կորսուելու վտանգին մէջ կը գտնուէր: Այդպէս, այս երկու անունները անրաժան կը մնան, ինչպէս Վենետիկի Վարժարանի բարաւորին վրայ ոսկեքանդակ, իրենց հետեւորդ փողփողուն աստեղաշարով՝ Արփիարեաններէն մինչեւ Վարուժանները, Շահիններէն մինչեւ Գուրգէն Ալեմշահները:

Մուրատի ոգին, վերարծարծուն «Եղբայր եմք մեք»ի հեղինակին խանդավառութեամբ, թող յաւիտեան ծածանի գաղթաշխարհի չորս կողմը սփռուած հայ ընտանիքներէն ներս, հայ զանգուածներէն ներս, հայ ակումբներէն ներս, մանաւանդ այս մե'ր օրերուն, երբ այնքան հարկ կայ սերտօրէն միանալու ամէն մարդի մէջ, կրօնական, ազգային, կուսակցական, կրթական:

Երանի՛ Մուրատ ու Պէշիկթաշեան իրենց օրինակով ներշնչարանն ըլլային հայկական մեծ միութեան:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ